«ՍԻՎԻԼԻԹԱՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

ՀՀ, Երևան 0014, Պ. Սևակ 8; Հեռ.՝ (374 60) 60 70 80; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Սիվիլիթաս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սիվիլիթաս» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

27 հունիսի, 2024թ.
ք.Երևան, Պ.Սևակի 8

'000 դրամ	*Ծանոթ.*	*31/12/23*	*31/12/22*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	64,924	59,222
Ոչ նյութական ակտիվներ		1,791	2,092
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***66,715***	***61,314***
Պաշարներ	7	33	15
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	8	187	199
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	9	877	1,627
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	16	42	11
Դրամական միջոցներ	10	18,729	2,720
Այլ ընթացիկ ակտիվներ	11	144,176	145,135
Ընթացիկ ակտիվներ		***164,044***	***149,707***
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***230,759***	***211,021***
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Հիմնադիրների ներդրումներ	12	500	500
Կուտակված շահույթ	12	5,415	1,246
Ընդամենը սեփական կապիտալ		***5,915***	***1,746***
Փոխառություններ	13	-	35,318
Ակտիվներին վերաբերող շնորհներ	14	66,715	61,313
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***66,715***	***96,631***
Վարկեր	15	1,198	1,134
Փոխառություններ	13	28,346	360
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	16	31,445	36,923
Կանխավճար ծառայությունների համար		-	364
Շահութահարկի գծով ընթացիկ հարկային պարտավորություն		-	1,591
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	17	163	6,173
Աշխատավարձի և այլ կարճ. հատուց-ի գծով պարտ-թյուններ	18	49,134	61,418
Եկամուտներին վերաբերող շնորհներ	19	47,636	4,545
Այլ պարտավորություն		207	136
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***158,129***	***112,644***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		***230,759***	***211,021***

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

Digitally signed by
NUROYAN NARINE
6708860481
Date: 2024.07.01

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ.*	*2023*	*2022*
Հասույթ	20	18,938	55,242
Վաճառքի ինքնարժեք	20	(16,600)	(48,500)
Համախառն շահույթ		***2,338***	***6,742***
Դրամաշնորհներից եկամուտ	21	346,533	382,586
Շնորհների գծով ծրագրային ծախսեր	21	(296,589)	(331,704)
Շնորհներից արդյունք		***49,944***	***50,882***
Այլ եկամուտներ	22	9,273	91
Իրացման ծախսեր		(10,521)	(14,175)
Վարչական ծախսեր		(59,883)	(40,340)
Այլ ծախսեր	22	(3,800)	(5,090)
Գործառնական շահույթ (վնաս)		***(12,650)***	***(1,890)***
Ֆինանսական ծախսեր	23	(190)	(215)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		17,009	(4,000)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**4,169**	**(6,105)**
Շահութահարկի գծով ծախս	24	-	(1,591)
Զուտ շահույթ (վնաս)		**4,169**	**(7,696)**

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն

Digitally signed by
NUROYAN NARINE
6708860481

Ն. Նուրոյան

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	*Ծանոթ.*	*Հիմնադիրների ներդրումներ*	*Կուտակված շահույթ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.		**500**	**8,942**	**9,442**
Զուտ շահույթ (վնաս)		-	(7,696)	**(7,696)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.		**500**	**1,246**	**1,746**
Զուտ շահույթ		**-**	**4,169**	**4,169**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.		**500**	**5,415**	**5,915**

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն

Digitally signed by
NUROYAN NARINE
6708860481

Ն. Նուրոյան

ՀԱՄԼԻԳՐԱՄ FOUNDATION 02589506

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ	***2023***	***2022***
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
դրամաշնորհներից	396,428	356,557
վաճառքներից	18,982	52,385
այլ մուտքեր	12	46
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(67,030)	(83,767)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(296,098)	(277,812)
շահութահարկի վճարումից	(1,591)	(635)
այլ հարկեր, պարտադիր վճարների վճարումից	(2,283)	(5,769)
ծրագրային և այլ	(34,826)	(35,044)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***13,593***	***5,961***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(7,080)	(21,579)
տրամադրված փոխառության մարումից	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(7,080)***	***(21,579)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերի, փոխառությունների ստացումից	17,431	27,884
վարկերի, փոխառությունների մարումից	(23,430)	(17,213)
տոկոսների վճարումից	(184)	(206)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(6,183)***	***10,465***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**329**	**(5,153)**
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	15,680	(6,844)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**2,720**	**14,717**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**18,729**	**2,720**

Տնօրեն Ա.Պողոսկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

Digitally signed by NUROYAN NARINE 6708860481
Date: 2024.07.01 19:01:54

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Նկարագիր և գործունեություն

«Սիվիլիթաս» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2008թ. մայիսի 20-ին: Հիմնադրամը իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը առ 31.12.2023թ. 50 անձ է և առ 31.12.2022թ.՝ 54:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1, գրասենյակ 30:

Հիմնադրամի գործունեության սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին Հիմնադրամին փոխանցված նյութական և ֆինանսական միջոցները՝ 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հիմնադրամի ֆինանսավորումն իրականացվում է դրամաշնորհների, նվիրատվությունների, նվիրաբերությունների, ինչպես նաև մեդիաարտադրությանը վերաբերող տարբեր քաղաքացիաիրավական պայմանագրերի ձևով:

Հիմնադրամն իրականացնում է տարբեր ծրագրեր՝ գյուղատնտեսության, կրթության, ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, տնտեսության և այլ ոլորտներում:

Հիմնադրամի նպատակներն են՝

- Հայաստանի հասարակության՝ դեպի գործունակ և առողջ պետականություն փոխակերպվելու գործընթացն առաջ մղելու նպատակով, ներգրավելով և օժանդակելով անհատներին, երաշխավորելով արժանապատվությունը, Հիմնադրամը՝ գործադրում է ներքին, արտաքին և Սփյուռքի միջոցներն ու հնարավորությունները՝ նորարարական մտահաղացումները խթանելու և նշանակալից փոփոխությունների վրա ներգործելու համար, համատեղ ջանքերը ուղղորդելու և միջոցներ տրամադրելու համար, արդեն իսկ ընթացքում գտնվող աշխատանքներն օժանդակելու և խթանելու միջոցով աջակցել Հայաստանի ընթացիկ և կայուն զարգացմանը.
- առաջնորդել նոր և լրացուցիչ ներքին նախաձեռնություններ, կենտրոնանալով կրթական կարիքների և մամուլի զարգացման վրա.
- աջակցել խաղաղության և կայունությանը Կովկասում, և մշակութային, կրթական ու քաղաքական երկխոսությունից զատ, առաջնորդվելով վստահելի, թափանցիկ և օբյեկտիվ քննարկումներ վարելու սկզբունքով, նպաստել՝ միջազգային և տարածաշրջանային գործընթացներում Հայաստանի դերակատարության և հնարավորությունների ավելի լայն հասարակական ըմբռնմանը:
- համագործակցել Սփյուռքի անհատների և կազմակերպությունների հետ, արդյունավետորեն օգտագործելով հայերի կապերն ու ներուժը՝ ընդհանուր շահեր հետապնդելու համար.
- նպաստել քաղաքագիտության, մշակույթի, կրթության, տնտեսության, բնապահպանության, տնտեսագիտության, իրավագիտության և սոցիալական ոլորտի տեսական, գիտահետազոտական և գործնական աշխատանքներին՝ դրանց տեսական ու գործնական կիրառումն ապահովելու միջոցով.
- աջակցել գիտական, կրթական և (կամ) հասարակական կազմակերպություններին, մամուլին, ինչպես նաև այդ ոլորտներում ընդգրկված ֆիզիկական անձանց՝ բնագավառի գործող տեխնոլոգիաների, կառուցակարգերի և միջազգային զարգացումների վերաբերյալ գիտելիքների տարածման, ուսուցման և լուսաբանման աշխատանքներում (ներառյալ՝ համատեղ կամ միակողմանի դասընթացների, սեմինարների, կոնֆերանսների կազմակերպման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ուսումնական պլանների, ծրագրերի մշակման, ներդրման, փորձաքննության, ինչպես նաև նյութական, տեխնիկական օժանդակության ցուցաբերմամբ).
- միջազգային համագործակցությունը՝ քաղաքագիտական, մշակույթային, կրթական, բնապահպանական, տնտեսական, տնտեսագիտական, իրավագիտության և սոցիալական, ինչպես նաև դրանց հետ առնչվող արդիական թեմաներով՝ ժամանակակից ուսուցողական և գիտահետազոտական նյութերի հայթայթման, ստեղծման (պատրաստման), հրատարակչական ծրագրերի իրականացման, միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցության և համագործակցության այլ ձևաչափերի կիրառմամբ:

1.2.Կառուցվածք և կառավարում

Հիմնադրամի հիմնադիրն է ՀՀ քաղաքացի՝ Վարդան Օսկանյանը:
Հիմնադրամի կառավարման բարձրագույն և գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որի կազմն հետևյալն է՝ Մ.Մինասյան (Խորհրդի նախագահ), Հ.Կասպար, Վ.Օսկանյան, Սալփի-Հարութինյան Ղազարյան:
Հիմնադրամի բարձրագույն գործադիր ղեկավար պաշտոնատար անձը տնօրենն է, ով նշանակվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամի տնօրենը իրականացնում է ընթացիկ գործառույթներ և հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված այլ լիազորություններ:

2. ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթները

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:
Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

4.1. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Սովորաբար սկզբնական արժեքը հիմնված է ակտիվի դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

4.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Հիմնադրամը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Հիմնադրամը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

4.3. Հիմնական միջոցներ

Սկզբնական չափում. Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը՝ հանած առևտրային զեղչերը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Հետագա ծախսումներ. Հիմնական միջոցի միավորի վրա նոր բաղկացուցիչի ավելացման կամ հիմնական միջոցի միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների փոխարինվող բաղկացուցիչները ենթակա են ապաճանաչման:

Հետագա չափում. Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածություն. Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար

հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Օգտակար ծառայության ժամկետները. մեքենաներ և սարքավորումներ՝ 4-8 տարի, տրանսպորտային միջոցներ՝ 5-8 տարի, արտադրական, տնտեսական գույք՝ 5-8 տարի, հաշվողական և համակարգչային տեխնիկա՝ 1-5 տարի, այլ հիմնական միջոցներ 8 տարի:

4.4. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Օգտակար ծառայության ժամկետները. համակարգչային ծրագրեր՝ 5 տարի, այլ ոչ նյութական ակտիվներ՝ 10 տարի:

Ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, որով կազմակերպությունը սպառում է ակտիվի տնտեսական օգուտները: Հիմնադրամը կիրառում է գծային մեթոդը:

4.5. Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

4.6. Հիմնական ֆինանսական գործիքներ

Քաղաքականության ընտրություն. Հիմնական ֆինանսական գործիքների նկատմամբ Ընկերությունը կիրառում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի 11-րդ և 12-րդ բաժինների պահանջներն ամբողջությամբ:

Հիմնական ֆինանսական գործքիներ են, մասնավորապես, առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները, վարկերը:

Սկզբնական ճանաչում. Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական չափում. Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, այն չափվում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), բացառությամբ եթե համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ կամ գործարքի կողմ հանդիսացող կազմակերպություններից մեկի մոտ առաջացնելով ֆինանսական պարտավորություն, կամ կոնտրագենտի մոտ՝ ֆինանսական ակտիվ: Համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, եթե վճարումը հետաձգվում է ավելի, քան սովորական գործունեության համար ընդունված ժամկետները, օրինակ՝ ապրանքների իրացման նպատակով գնորդին տրամադրվում է հետաձված անտոկոս վճարումների իրավունք (անտոկոս կրեդիտավորում) կամ ֆինանսավորվում է մի տոկոսադրույքով, որը շուկայական տոկոսադրույք չէ, օրինակ՝ աշխատողին տրամադրում է անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ: Եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի, ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ զեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով, որը որոշվել էր սկզբնական ճանաչման պահին:

Հետագա չափում. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ առանց հանելու գործառնության հետ կապված որևէ ծախսում, որը Ընկերությունը կարող է կրել վաճառքի կամ այլ օտարման դեպքում:

Որպես ընթացիկ ակտիվներ կամ ընթացիկ պարտավորություններ դասակարգված պարտքային գործիքները չափվում են դրամական միջոցների կամ այլ հատուցման չզեղչված գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի կամ կստացվի (այսինքն՝ արժեզրկումը հանած), բացառությամբ եթե համաձայնությունը հանգեցնում է ֆինանսավորման գործարքի:

Ամորտիզացված արժեք և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ. Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների զուտ գումարն է՝

ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին,

բ) հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ,

գ) գումարած կամ հանած սկզբնական ճանաչման գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,

դ) հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով ցանկացած նվազեցում (ուղղակիորեն կամ կարգավորող հաշիվների օգտագործման միջոցով):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն զեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

<u>Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական գործիքների արժեզրկում.</u> Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված որևէ ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը անմիջապես ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի արժեզրկված լինելու անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողի ուշադրությանն արժանացած դիտարկելի տվյալները՝ հետևյալ կորստի դեպքերի վերաբերյալ՝

ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.

բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.

գ) պարտապանի ֆինանսական դժվարությունների հետ կապված՝ տնտեսական կամ իրավական պատճառներով, պարտատիրոջ կողմից պարտապանին զիջումների տրամադրումը, որը այլապես պարտատերը չէր նախատեսի.

դ) հավանական է դարձել, որ պարտապանը կսնանկանա կամ կենթարկվի այլ ֆինանսական վերակազմավորման.

ե) դիտարկելի տվյալներ, որոնք վկայում են, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշակիացնել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով:

<u>Չափում.</u> Ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստը ակտիվի հաշվեկշռային արժեքի և ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված՝ գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև եղած տարբերությունն է: Եթե այդպիսի ֆինանսական գործիքն ունի փոփոխուն տոկոսադրույք, արժեզրկումից կորուստը չափելու նպատակով զեղչման դրույքը պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է:

Եթե հետագա որևէ ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է, և նվազումը կարող է օբյեկտիվորեն կապված լինել արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած որևէ դեպքի հետ, ապա Ընկերությունը հակադարձում է նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը կամ ուղղակիորեն, կամ կարգավորող հաշիվը ճշգրտելու միջոցով: Հակադարձումը չպետք է հանգեցնի այն բանին, որ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը (բոլոր կարգավորող հաշիվները հանած) գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կլիներ, եթե նախկինում արժեզրկումը ճանաչված չլիներ: Հակադարձման գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

<u>Ֆինանսական ակտիվների ապաճանաչում.</u> Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i)

փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Առևտրական դեբիտորական պարտքեր. Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

Առևտրական կրեդիտորական պարտքեր. Սկզբնական ճանաչման պահին առևտրական կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքի, երբ կրեդիտորական պարտքը չի պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ. Ստացված վարկը (փոխառություն) սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը: Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են զուտ գումարով այն դեպքում, երբ Ընկերությունը՝

ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և

բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

4.7. Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

4.8. Հասույթներ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը, և՝

դ) հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (Հիմնադրամը կիրառում է այն մեթոդը, որով հնարավոր է առավել արժանահավատորեն չափել մատուցված ծառայությունները)՝

ա) կատարված աշխատանքների ուսումնասիրություն.

բ) տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերակցություն, կամ՝

գ) տվյալ ամսաթվի դրությամբ կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների ծավալի հարաբերակցությունը:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

4.9. Շնորհներ

Ճանաչում

- շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.
- շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.
- ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Չափում

Շնորհները չափվում են ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

4.10. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

31.12.2022թ. դրությամբ մեկ եվրոյի փոխարժեքը կազմել է 420.06 դրամ (31.12.2021թ – 542.61 դրամ).

4.11. Սխալներ

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

Հետընթաց վերահաշվարկման սահմանափակումներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալը պետք է ուղղվի հետընթաց վերահաշվարկմամբ, բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը:

Եթե անիրագործելի է որոշել մեկ կամ ավելի նախորդող ժամանակաշրջաններ ներառող հաշվետվություններում ներկայացված համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակակաշրջանին վերաբերող սխալի հետևանքները, ապա Հիմնադրամը վերահաշվարկում է այն ամենավաղ ժամանակաշրջանի (որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը) ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները, որի համար հետընթաց վերահաշվարկումն իրագործելի է:

Եթե ընթացիկ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ բոլոր նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող սխալի կուտակային հետևանքի որոշումն անիրագործելի է, ապա Հիմնադրամը վերահաշվարկում է համադրելի տեղեկատվությունը՝ հնարավոր ամենավաղ ամսաթվից սկսած՝ սխալն առաջընթաց ուղղելու համար:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

6. Հիմնական միջոցներ

'000 դրամ	*Շենքեր*	*Մեքենա-սարքա-վորումներ*	*Տրանսպոր-տային միջոցներ*	*Արտադրա-տնտեսա կան գույք*	*Այլ հիմնա-կան միջոցներ*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2021թ.	**3,462**	**38,592**	**11,045**	**137,648**	**2,423**	**193,170**
Ավելացում	-	4,141	126	17,270	42	**21,579**
Դուրս գրում	-	(370)	-	(850)	-	**(1,220)**
31 դեկտեմբերի 2022թ.	**3,462**	**42,363**	**11,171**	**154,068**	**2,465**	**213,529**
Ավելացում	**-**	**5,628**	**208**	**1,952**	**-**	**7,788**
Դուրս գրում	**-**	**-**		**(2,032)**	**(67)**	**(2,099)**
31 դեկտեմբերի 2023թ.	**3,462**	**47,991**	**11,379**	**153,988**	**2,397**	**219,218**
Կուտակված մաշվածություն						
31 դեկտեմբերի 2021թ.	**321**	**37,132**	**10,328**	**86,124**	**1,792**	**135,697**
Տարեկան մաշվածություն	174	2,290	542	16,589	103	**19,698**
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	(370)	-	(718)	-	**(1,088)**
31 դեկտեմբերի 2022թ.	**495**	**39,052**	**10,870**	**101,995**	**1,895**	**154,307**
Տարեկան մաշվածություն	**-**	**1,337**	**381**	**323**	**8**	**2,049**
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	**-**	**-**	**-**	**(2,032)**	**(31)**	**(2,063)**
31 դեկտեմբերի 2023թ.	**495**	**40,389**	**11,251**	**100,286**	**1,872**	**154,293**
Հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2021թ.	**3,141**	**1,460**	**717**	**51,524**	**631**	**57,473**
31 դեկտեմբերի 2022թ.	**2,967**	**3,311**	**301**	**52,073**	**570**	**59,222**
31 դեկտեմբերի 2023թ.	**2,967**	**7,602**	**128**	**53,703**	**525**	**64,925**

Այլ. Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշվածությունը հաշվարկված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 2023թ-ի տարեվերջին կազմում է 98,667 հազար դրամ (2022թ-ին՝ 100,892 հազար դրամ):

Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային պարտավորություններ չկան:

7. Պաշարներ

Այս հոդվածում ներկայացված են դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով ձեռք բերված և ծրագրի շահառուներին տրամադրվող ակտիվները:
2023թ. որպես ծախս ճանաչված պաշարների հաշվեկշռային արժեքը կազմել է 784 հազար դրամ (2022թ.-ին՝ 1,116 հազար դրամ):

8. Կանխավճար պաշարների և ծառայությունների համար

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2023թ.*	*Մնացորդ 31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**187**	**199**
• ծառայություններ ձեռքբերելու համար	187	169

9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2023թ.*	*Մնացորդ 31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**877**	**1,627**
• արտադրանքի, ապրանքների վաճառքից	877	1,627

10. Դրամական միջոցներ

	Մնացորդ 31.12.2023թ.					*Մնացորդ 31.12.2022թ.*			
	Եվրո	*ԱՄՆ դոլար*	*Ռուբլի*	*Շվեց. ֆրանկ*	*'000 դրամ*	*Եվրո*	*ԱՄՆ դոլար*	*Շվեց. ֆրանկ*	*'000 դրամ*
Ընդամենը, այդ թվում՝	**32,355**	**6,631**	**508**	**5**	**18,729**	**20**	**6,501**	**5**	**18,729**
• բանկում՝ արժույթով	-	-	-	-	438	-	-	-	151
• բանկում՝արտարժույթով	32,355	6,631	508	5	18,291	20	6,501	5	2,569

11. Այլ ընթացիկ ակտիվներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2023թ.*	*Մնացորդ 31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**144,176**	**145,135**
• դրամաշնորհի ծախսերի գծով ակնկալվող փոխհատուցումներ	143,735	145,135

Դրամաշնորհների ծախսերի գծով ակնկալվող փոխհատուցումները հաշվետու տարվա վարչական ծախսերի փոխհատուցման ենթակա գումարն է դրամաշնորհատուի կողմից:

12. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը (զուտ ակտիվները) ձևավորված է հիմնադրի ներդրումից, կուտակված շահույթից (վնասից)՝ ներառյալ հաշվետու տարվա ֆինանսական արդյունքը:

Հիմնադրի ներդրում. Հիմնադրի ներդրումը կազմում է 500,000 (հինգ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ: Հաշվետու տարում փոփոխություն տեղի չի ունեցել:

Կուտակված շահույթ Կուտակված շահույթը 2023 թվականի սկզբի դրությամբ կազմում է 1,247 հազար դրամ: 2023 թվականին զուտ շահույթը կազմել է 4,169 հազար դրամ:

13. Փոխառություններ

'000 դրամ	*Մնացորդ առ 31.12.2023թ.*	*Մնացորդ առ 31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**28,346**	**35,678**
• երկարաժամկետ	-	35,318
կապակցված կողմերից	-	*35,318*
• կարճաժամկետ	28,346	360
կապակցված կողմերից	*28,346*	*360*

Ստացված փոխառությունները անտոկոս են, որոնց մարման ժամկետները մինչև 2024թ.-ն են:

14. Ակտիվներին վերաբերող շնորհներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Ավելա-ցում*	*Նվազե-ցում*	*Մնացորդ 31.12.2022թ.*	*Ավելա-ցում*	*Նվազե-ցում*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Ընդամենը	**59,865**	**19,178**	**(17,730)**	**61,313**	**8,639**	**(3,237)**	**66,715**

Այս հոդվածի ավելացումը անհատույց ստացված հիմնական միջոցներն են և դրանց ձեռք բերման նպատակով ստացված դրամական միջոցները, իսկ նվազեցումը՝ ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչումն է:

15. Վարկեր

'000 դրամ	*Տոկոսա-դրույք*	*Մարման ժամկետ*	*Մնացորդ 31.12.2023թ.*	*Մնացորդ 31.12.2022թ.*
Ընդամենը ընթացիկ վարկեր, այդ թվում՝			**1,198**	**1,134**
-ԱՄՆ դոլարով վարկային գիծ	18%	քարտի գործողության ժամկետով, բայց ոչ ավելի 240 ամսից	1,192	1,126
-հաշվեգրված տոկոս			6	8

16. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2023թ.*	*Մնացորդ 31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**31,445**	**36,923**
• գործառնական վարձակալության գծով	26,937	31,463
կապակցված կողմերից	*26,937*	*31,097*
• ծառայությունների ձեռքբերումից	4,388	5,397

17. Հարկեր

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2023թ.*		*Մնացորդ 31.12.2022թ.*	
	կանխավճար	*պարտա-վորություն*	*կանխավճար*	*պարտա-վորություն*
Ընդամենը, այդ թվում՝	**42**	**163**	**11**	**6,173**

• եկամտային հարկ	-	-	-	4,914
• սոց. վճար/դրոշմանիշային վճար	42	-	11	1,110

18. Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2023թ.*	*Մնացորդ 31.12.2022թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**49,134**	**61,418**
• աշխատավարձի գծով	1,801	12,852
• կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով	47,333	48,566

19. Եկամուտներին վերաբերող շնորհներ

000 դրամ	*Մնացորդ 31.12.2021թ.*	*Ավելա-ցում*	*Նվազե-ցում*	*Մնացորդ 31.12.2022թ.*	*Ավելա-ցում*	*Նվազե-ցում*	*Մնացորդ 31.12.2023թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**44,548**	**175,702**	**(215,705)**	**4,545**	**386,387**	**(343,296)**	**47,636**

Այս հոդվածի ավելացումը տարբեր ծրագրերի իրականացման նպատակով անհատույց ստացված դրամական միջոցներն են, իսկ նվազեցումը՝ եկամուտներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչումն է:

20. Վաճառքներ

'000 դրամ	*2023թ.*			*2022թ.*		
	Հասույթ	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*Հասույթ*	*Ինքնարժեք*	*Շահույթ*
Ընդամենը, այդ թվում՝	**18,938**	**(16,600)**	**2,338**	**55,242**	**(48,500)**	**6,742**
• ծառայությունների մատուցումից	18,938	(16,600)	2,338	55,242	(48,500)	6,742

21. Դրամաշնորհներ

Դրամաշնորհներից եկամուտ

'000 դրամ		*2023*	*2022*
Ընդամենը, այդ թվում՝		**346,533**	**382,586**
• ակտիվներին վերաբերող շնորհներից	(ծանոթ. 13)	3,237	17,730
• եկամուտներին վերաբերող շնորհներից	(ծանոթ. 9, 18)	343,296	364,856

Դրամաշնորհների գծով ծախսեր

'000 դրամ	*2023*	*2022*
Ընդամենը, այդ թվում՝	**(296,589)**	**(331,704)**
• աշխատավարձ	(260,414)	(268,644)
• գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(1,337)	(3,272)
• կոմունալ, գրասենյակային և այլ ծախսեր	(22,751)	(46,892)
• վառելանյութ	(784)	(822)

• վարձակալություն	(11,303)	(12,074)

22. Այլ ծախսեր/եկամուտներ

'000 դրամ	***2023***	***2022***
Այլ եկամուտներ (օգուտներ) ընդամենը, այդ թվում՝	**9,273**	**91**
• վարձակալությունից	133	60
• հարկային պարտավորությունների ճշգրտումից	9,128	15

'000 դրամ	***2023***	***2022***
Այլ ծախսեր (վնասներ) ընդամենը, այդ թվում՝	**(3,800)**	**(5,090)**
• արտարժույթի փոխարկումից	(3,760)	(3,224)
• հարկային պարտավորությունների ճշգրտումից	-	(1,506)

23. Ֆինանսական ծախսեր

'000 դրամ	***2023***	***2022***
Ֆինանսական (տոկոսային) ծախսեր ընդամենը, այդ թվում՝	**(190)**	**(215)**
• վարկերի գծով	(190)	(215)

24. Շահութահարկ

'000 դրամ	***2023***	***2022***
• **շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝	**-**	**(1,591)**
o ընթացիկ հարկի գծով	-	(1,591)

'000 դրամ

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում	***2023***	***2022***
Հարկի կիրառվող դրույք	18%	18%
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	4,169	(6,105)
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	-	14,944
Հարկվող շահույթը	-	8,839
Ընթացիկ հարկ	-	1,591
Հարկի գործող միջին դրույքը	-	-

25. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

'000 դրամ	***Ծանոթ.***	***2023***	***2022***
Հասույթ	19	18,938	55,242
Դրամաշնորհներից եկամուտ	20	346,533	382,586
Այլ եկամուտներ	21	9,273	91
Օգտագործված հումք և նյութեր		(784)	(1,116)
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(280,774)	(278,600)
ՀՄ-ների մաշվածություն		(2,049)	(19,698)
Գործառնական այլ ծախսումներ և ծախսեր		(103,787)	(140,395)

Գործառնական շահույթ (վնաս)		**(12.650)**	**(1,890)**
Ֆինանսական ծախսեր	22	(190)	(215)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		17,009	(4,000)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**4,169**	**(6,105)**
Շահութահարկի գծով ծախս	23	-	(1,591)
Զուտ շահույթ (վնաս)		**4,169**	**(7,696)**

26. Ֆինանսական գործիքներ

Բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամը հակված է ֆինանսական տարբեր ռիսկերի՝ շուկայական ռիսկի (ներառյալ՝ արժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, այլ գնային ռիսկի), իրացվելիության ռիսկի և պարտքային ռիսկի: Հիմնադրամը չի կիրառում ածանցյալ գործիքներ հեջավորելու նշված ռիսկերը:

26.1 Շուկայական ռիսկ

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Հիմնադրամի հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքներին, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման ռիսկ, հետևյալն են՝ ԱՄՆ դոլար, Եվրո:

Հիմնադրամը ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված	***USD***		***EUR***		***CHF***	
	2023	***2022***	***2023***	***2022***	***2023***	***2022***
Ընթացիկ ակտիվներ						
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-	-	-	-
Դրամական միջոցներ	6,631	6,501	32,355	20	5	5
Ոչ ընթացիկ պարտավորություններ						
Փոխառություններ	-	(2,500)	-	-	-	-
Ընթացիկ պարտավորություններ						
Վարկեր	(2,961)	(2,880)	-	-	-	-
Փոխառություններ	(2,500)	-	-	-	-	-
Կրեդիտորական պարտքեր	(74)	-	-	-	-	-
Զուտ հաշվեկշիռ	***1,096***	***1,121***	***20***	***20***	***5***	***5***

Տոկոսադրույքային ռիսկ. Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Հաշվետու ամսաթվով Հիմնադրամը չունի ստացված կամ տրված փոխառություններ, կամ այլ ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ, որոնք հակված են տոկոսադրույքային ռիսկի:

Այլ գնային ռիսկ. Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

26.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Հիմնադրամի նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում, Հիմնադրամը կարող է կրել ֆինանսական կորուստներ:

Պարտքային ռիսկը առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային դեբիտորական պարտքերից: Հիմնադրամի առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջանում են նյութերի պատրաստման և հրապարակման ծառայություններից:

Նախորդ տարիներին դեբիտորական պարտքերի նկատմամբ անհավաքագրելիության պահուստ չի ձևավորվել, այլ կատարվել են անհուսալի դեբիտորական պարտքերի ուղղակի դուրսգրումներ: 2023թ.-ին և 2022թ.-ին դուրսգրումներ չեն եղել:

26.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Հիմնադրամը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Հիմնադրամը պատրաստում է դրամական հոսքերի տարեկան նախահաշիվներ: Հիմնադրամի դրամական հոսքերի կանխատեսումների մեջ ներառվում են հիմնադիրներից ստացվելիք շնորհները և այլ հատկացումները:

27. Պայմանականություններ

27.1. Ապահովագրություն

Հիմադրամը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2. Երաշխիքներ

Չկան Հիմնադրամի կողմից տրամադրված և (կամ) ստացված երաշխիքներ:

27. Կապակցված կողմերի բացահայտում

Կապակցված կողմերի փոխհարաբերությունների բնույթը

Անվանումը	Բնույթը
Վարդան Օսկանյան	Վերահսկող/հիմնադիր
Հարաչ Կասպար	Խորհրդի անդամ
Աբրահամ Պողիկեան	Տնօրեն
Սալփի-Հարութինյան Ղազարյան	Խորհրդի անդամ

Կապակցված կողմերի հետ գործարքներ

'000 դրամ	*Ստացված փոխառություններ*	*Այլ կրեդիտորական պարտքեր (վարձակալություն)*
Ծանոթ.	*12*	*17*
Մնացորդ 31.12.2021թ.	27,534	32,713
Ավելացում	21,000	14,232
Նվազեցում	(13,216)	(15,848)
Մնացորդ 31.12.2022թ.	35,318	31,097
Ավելացում	11,028	13,848
Նվազեցում	(18,000)	(18,008)

Մնացորդ 31.12.2023թ.	28,346	26,937

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին (2 անձ) կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2023թ. կազմել է 34,578 հազար դրամ և 2022թ.՝ 34,151 հազար դրամ: Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

28. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2023թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (27.06.2024թ.) ընկած ժամակահատվածում:

29. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2024թ. հունիսի 27-ին՝ տնօրեն Ա.Պողիկեանի և գլխավոր հաշվապահ «Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի հաշվապահական ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյանի կողմից:

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

Digitally signed by
NUROYAN NARINE
6708860481